

# ՄԵՔԵՆԱՅԻ

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱ



Կամավոր ավտոքաղաքացիական պատասխանատվության ապահովագրությունն (ԱՊԱ) իրենից ներկայացնում է **ԱՊՊԱ ծածկույթի ընդլայնում**, որով հատուցվում են ԱՊՊԱ պայմանագրով սահմանված ապահովագրական գումարները գերազանցող վնասները:

Ի լրումն ԱՊԱ ծածկույթի՝ լրացուցիչ ապահովագրավճարով հնարավոր է ԱՊԱ-ն դարձնել **«Երկկողմանի»**, այն է՝ ապահովագրել **նաև տուժող մեքենային պատճառված վնասները, որոնք գերազանցում են ԱՊՊԱ 1,800,000 ՀՀ դրամ սահմանաչափը:**



### Ո՞Ր ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ



- » 1990թ. հետո արտադրված թեթև մարդատար, մոտոտրանսպորտ տեսակի տրանսպորտային միջոցներ

### Ո՞Ր ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՉԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ



- » Բեռնատար,
- » 7-ից ավել նստատեղ ունեցող մարդատար, ավտոբուս, տրոլեյբուս տեսակի,
- » Vaz2121, Gaz32,33 մակնիշի տրանսպորտային միջոցները

### ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ



- » Պայմանագիրը կնքվում է 3 ամսից մինչև 1 տարի ժամկետով:

### ՈՐՏԵ՞Ղ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



- » ՀՀ և Արցախ:

### ԿՃԱՐՄԱՆ ԻՆ՞Չ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԿԱՆ



- » Ապահովագրավճարը վճարվում է միանվագ՝ պայմանագրի կնքման պահին:

### ԼԻԱԶՈՐՎԱԾ ՎԱՐՈՐԴՆԵՐ



- » Պայմանագիրը կնքվում է «անսահմանափակ» թվով վարորդներով:



### Ո՞Ր ՌԻՍԿԵՐՆ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ



- » ՃՏՊ արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին վնաս հասցնելու իրադարձությունը, որը հիմք է հանդիսացել ՀՀ օրենսդրության համաձայն SU-ի սեփականատիրոջ նկատմամբ վնասի հատուցման պահանջ ներկայացնելուն՝ կապված.
  - » այլ տրանսպորտային միջոցների վնասման կամ ոչնչացման հետ,
  - » այլ տրանսպորտային միջոցներում գտնվող գույքի վնասման կամ կորստի հետ,
  - » շարժման մեջ գտնվող SU-ի հետ բախման արդյունքում այլ շարժական կամ անշարժ գույքի վնասման կամ կորուստի հետ,
  - » ֆիզիկական անձանց մահվան կամ աշխատունակության կորստի (ժամանակավոր կամ մշտական) հետ:
- » Չեն հատուցվում Ապահովագրված SU-ի լիազորված վարորդին, ուղևորին, SU-ում առկա գույքին պատճառված վնասները:

# ՄԵՔԵՆԱՅԻ

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Ծածկույթի հնարավոր ընդլայնում - ԱՊԱ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ

- » Ապահովագրվում են նաև տուժող մեքենային պատճառված վնասները, որոնք գերազանցում են ԱՊԱ շրջանակներում հատուցման 1,800,000 ՀՀ դրամ սահմանաչափը:
- » ԱՊԱ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ծածկույթով ապահովագրական պատահար է համարվում ԱՊԱ շրջանակներում ապահովագրական պատահար հանդիսացող դեպքը:
- » Հատուցման են ենթակա ՏՄ գույքային վնասները, որոնք գերազանցում են 1,800,000 ՀՀ դրամը և գոյություն ունի ԱՊԱ պատահարի դրական կարգավորման որոշում:

### ԼՐԱՑՈՒՑԻՉ ՌԻՍԿԵՐ

- » Վարորդի և ուղևորների ապահովագրություն դժբախտ պատահարներից:
- » Մեքենայի շտապ օգնություն, մասնավորապես.



- » շարժական վնականացում,
- » վառելիքի առաքում,
- » էլեկտրասնուցման կարգավորում (ակունուլյատորների լիցքավորում),
- » էվակուացիա:

### ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

#### ԱՊԱ

180 օրից ավել կնքվող պայմանագրերի համար.

Ապահովագրական գումար	Ապահովագրավճար
20,000,000	31,900
15,000,000	25,900
10,000,000	20,900
8,200,000	16,900
5,000,000	14,900
3,200,000	9,000
1,200,000	5,000

#### ԱՊԱ

Մինչև 180 օր կնքվող պայմանագրերի համար.

Ապահովագրական գումար	Ապահովագրավճար
20,000,000	19,000
15,000,000	15,900
10,000,000	12,900
8,200,000	10,900
5,000,000	8,900
3,200,000	4,900
1,200,000	3,000

#### ԱՊԱ «ԵՐԿԿՈՂՄԱՆԻ»

180 օրից ավել կնքվող պայմանագրերի համար.

Ապահովագրական գումար	Ապահովագրավճար
8,200,000	32,000
3,200,000	15,000
1,200,000	6,000

#### ԱՊԱ «ԵՐԿԿՈՂՄԱՆԻ»

Մինչև 180 օր կնքվող պայմանագրերի համար.

Ապահովագրական գումար	Ապահովագրավճար
8,200,000	20,000
3,200,000	10,000
1,200,000	4,500

#### ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

180 օրից ավել կնքվող պայմանագրերի համար.

Ապահովագրական գումար	Ապահովագրավճար
5,000,000	9,000
2,000,000	4,000
1,000,000	2,000
500,000	1,500

#### ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մինչև 180 օր կնքվող պայմանագրերի համար.

Ապահովագրական գումար	Ապահովագրավճար
5,000,000	5,000
2,000,000	3,000
1,000,000	1,500
500,000	1,000

# ՄԵՔԵՆԱՅԻ

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- » Վթար տեղի ունենալու կամ վնաս նկատելու դեպքում անմիջապես կապ հաստատել **ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ**-ի հետ՝ 010 59 21 21 հեռախոսահամարով:
- » Մեքենան թողնել անշարժ և սպասել Ապահովագրողի ցուցումներին:  
*Ըստ ցուցումների՝ հնարավոր է առաջանա նաև ճՈ կամ ՍԻՆ աշխատակիցների ներգրավման կարիք:*

### ՈՐՈՂՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ներկայացնել հայտային դիմում հետևյալ եղանակներից մեկով.
  - » [online.ingoarmenia.am](https://online.ingoarmenia.am) առցանց հարթակի միջոցով,
  - » ձեռքով լրացնելով հայտային դիմումը (ներբեռնելով այն [www.ingoarmenia.am](https://www.ingoarmenia.am) կայքից) և լրացված դիմումի լուսապատճենը կամ լուսանկարը ուղարկել [dimum@ingoarmenia.am](mailto:dimum@ingoarmenia.am) էլեկտրոնային հասցեին կամ VIBER հավելվածով՝ **+374 44 41 07 23** հեռախոսահամարին:
- Հայտային դիմումում ընտրել հատուցման եղանակը.
  - » վերանորոգում լավագույն ավտոսպասարկման կենտրոններում,
  - » դրամային արտահայտությամբ հատուցման ստացում:
- Ներկայացնել այլ անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում.
  - » ապահովագրի և վարորդի անձնագիր, վարորդական վկայական,
  - » մեքենայի տեխ.անձնագիր,
  - » վնասի լուսանկարներ,
  - » ՃՈ եզրակացություն, ՃՈ վարչական վարույթի եզրակացություն, և այլն:
- Սպասել ապահովագրողի հետագա ցուցումներին:  
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ – Հատուցման ընթացքին կարող եք հետևել <https://online.ingoarmenia.am/claim-status> հղմամբ:

### ԻՆՉՊԵՄ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

- » մոտենալ ընկերության գրասենյակներից կամ վաճառքի կետերից մեկը,
- » զանգահարել 010 59 21 21 հեռախոսահամարով և հրավիրել մասնագետին Ձեզ հարմար վայր,
- » պատվիրել պայմանագիր մեր սոցիալական հարթակների միջոցով,
- » գրել մեր կայքի chat-ով,
- » ուղարկել էլեկտրոնային հաղթագրություն՝ [info@ingoarmenia.am](mailto:info@ingoarmenia.am) էլեկտրոնային հասցեին:

### ԻՆՉ ՓԱՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ



- » Մեքենայի տեխ.անձնագիր,
- » սեփականատիրոջ և լիազորված վարորդների անձնագրեր և սոցիալական քարտեր (կամ ID):

### ԻՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐԱԿՆՔԵԼՈՒ (ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ) ՀԱՄԱՐ

- » Եթե Դուք հանդիսանում եք **ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ**-ի հաճախորդ, ապա ապահովագրության պայմանագիրը վերականգնելու համար անհրաժեշտ է ներկայացնել միայն այն փաստաթղթերը, որոնցում տեղի են ունեցել փոփոխություններ: